Անդրկասպեան աշխարհի եղած Հայերը, նոյնպէս և Սալեանի ձկնորսատեղեաց Հայերը հաստատուն բնակիչներ չէ կարելի հաշուել, այլ իսկապէս գաղթականք, ըստ որում Անդրկասպեան աշխարհը զինուորական աշխարհ լինելով՝ դեռ հաստատուն քաղաքներ չեն հիմնուած. և տեղւոյն Հայերն և օտար ազգերը զինուորական բանակի շուրջն հետեւելով՝ հետզհետէ զօրաց հետ յառաջ են խաղում, և այս պատճառաւ զգուշանում են հաստատուն բնակութիւն դնել, միայն Ասղապատ քաղաքը քանի տարի է հաստատութիւն է ստացել. որ տեղ կայ և Հայոց եկեղեցի և դպրոց և 150 տան չափ Հայք[1]։

Այսպէս և Սալեանի ձկնորսատեղեաց Հայերը չունին հաստատուն բնակութիւն, ըստ որում նոցա հաստատութիւնը կախուած է բանակին բօժիպրօմիսլայի կապալառուների բարեհաճ տնօրէնութիւնից, որ օգնեն եկեղեցւոյ և դպրոցի շինութեանը։

[1]) Կան և Ղըզել-Արվատ քաղաքում ազգատուն Հայոց և քահանայ և 70 տուն Հայք. իսկ Մէրվ քաղաքում 1893 թուին Հայք պատրաստում էին եկեղեցի և դպրոց շինել։